ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. **N --- - Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին **որոշում է.**

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի չորրորդ եռամսյակում հատկացնել մինչև 241,065.6 հազ. դրամ, որից.

1) 158,565.6 հազ. դրամ՝ Երևան քաղաքում սանիտարական մաքրում իրականացնող կազմակերպություններին փողոցների և մայթերի սանիտարական մաքրման (ձյան մաքրման) մեքենա–մեխանիզմներով ապահովելու նպատակով «Երևան» հիմնադրամին օժանդակություն տրամադրելու համար բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով,
2) 82,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում ասֆալտ–բետոնյա ծածկի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով ձմռան նախապատրաստական աշխատանքների իրականացման համար չկանխատեսված ծրագրերի ֆինանսավորման նպատակով սույն որոշման նախագծով նախատեսվում է.

1. Երևան քաղաքում փողոցների և մայթերի սանիտարական մաքրման, մասնավորապես ձյան մաքրման աշխատանքները պատշաճ կերպով կատարելու նպատակով ձեռք բերել մեքենա–մեխանիզմներ, որի համար առաջարկվում է հատկացնել 158,565.6 հազ. դրամ՝ «Երևան» հիմնադրամի միջոցով գնելու և սանմաքրման աշխատանքներ իրականացնող համայնքային կազմակերպություններին նվիրաբերելու համար։
2. Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով իրականացված ասֆալտապատման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ 15000քմ ընթացիկ նորոգման և փոսալցման աշխատանքներ, որի համար անհրաժեշտ գումարը կազմում է 82,500.0 հազ. դրամ, ինչն էլ առաջարկվում է հատկացնել սույն որոշման նախագծով

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 241,065.6 հազ. դրամ։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով նախատեսված միջոցներում փոփոխություններ չեն սպասվում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ